<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱԳԱՐԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Անկախ դերբայների կիրառումը Ակսել Բակունցի արձակում

ԱՌԱՐԿԱ Հայոց լեզու և Գրականություն

ՀԵՂԻՆԱԿ Ռոզա Ղարիբյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գագարինի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն 3
Գլուխ առաջին 8
Գլուխ երկրորդ 14
Եզրակացություններ 19
Օգտագործված Գրականությունների ցանկ……....20

Ներածություն

Հայերեն քերականության մեջ դերբայները երկար ժամանակ ուսումնասիրվել են բայից անկախ, որպես առանձին խոսքի մաս, այն հիմունքով, որ նրանք իրենց մեջ համատեղում են բայի և անվան (գոյականի և ածականի) հատկանիշները։ Մյուս կողմից՝ բոլոր դերբայներից առանձնացվել է բայի անորոշ ձևը ,որպես մի առանձին եղանակ՝ աներևույթ եղանակ։

Դերբայ ասվում են այն անունները և ածականները, որոնք ցույց են տալիս բայական իմաստ առանց դեմքի։ Դերբայները լինում են բայանուն կամ անորոշ դերբայ և բայածականներ։ Բայածականներն իրենց կողմից լինում են անկատար, ապառնի, անցյալ և ենթակայական դերբայներ։

Դերբայներն իսկապես բայ չեն, այլ բայի հիմքից կազմված անուն կամ՝ ածական (մականուն, մակբայ), - գրել է Մ. Աբեղյանը։

Նա արդի հայերենում ընդունում է հետևյալ դերբայները, անորոշ (գնալ, ասել), անկատար՝ ում և իս վերջավորություններով (գնում, գնալիս), ապառնի՝ ու և իք վերջավորություններով (գնալու, գնալիք), անցյալ ել և ած վերջավորություններով (գնացել, գնացած) և ենթակայական (գնացող)։

Այսպիսով բայի մեջ դիտարկվեց երկու դրսևորում։ «Բայը խոսքի մեջ կարող է հանդես գալ և հանդես է գալիս երկու ձևով՝ դիմավոր և «անդեմ», - գրում է Գ. Սևակը։

«Բայի անդեմ ձևը ունի միայն բայական հիմնական հատկանիշներ», այսինքն՝ բայիմաստ, սեռ և խնդրառություն և հենց այսքանով էլ բայ է և անկապտելի է բայական համակարգից։

Հայոց լեզվի դերբայների ամբողջական ուսումնասիրությանն է նվիրված պրոֆ. Ա. Աբրահամյանի «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունները» (1953 թ.) աշխատությունը, որտեղ լեզվաբանը փաստական նյութի հիման վրա քննում է հայերենի դերբայների ձևավորման ակունքները, զարգացումն ու փոփոխությունները, լեզվի տարբեր փուլերում նրանց ունեցած կոնկրետ դրսևորումները։ Այս աշխատությունը հայերենի դերբայական ձևերի պատմական հանգամանալից մի հետազոտություն է։

Ուսումնասիրելով հայերենի բայն իր զարգացման ընթացքի մեջ՝ գրավոր լեզվի բոլոր շրջաններում և բարբառներում, տեսնում ենք, որ դերբայական ձևերի ճնշող

մեծամասնությունը (նույնիսկ անորոշն ու ենթակայականը) հանդես են գալիս դիմավոր ձևերի (բաղադրյալ ձևեր) կազմության մեջ : Դերբայական ձևերը չնայած չեն արտահայտում և չունեն դեմք, թվի, եղանակի, ժամանակի քերականական կարգերը, բայց բայեր են, քանի որ նրանց հատուկ են բայական հիմնական հատկանիշները՝ բայիմաստ, սեռ, խնդրառություն և մասամբ կերպ: Բացի այդ հատկանիշներից, ըստ Ա. Աբրահամյանի, անդեմ ձևերն ունեն դերբայական հատուկ իմաստ:

«Այդ իմաստը դերբայի մեջ դրսևորվող գործողության կամ եղելության վիճակն է, որ առանձին դերբայների մեջ (ապառնի, վաղակատար, հարակատար, անցյալ) առավել ցայտուն լինելով՝ մոտենում է ժամանակի կատեգորիային, սակայն չի ստանում ժամանակի կատեգորիայի որոշակիություն:

Դերբայական ձևերի մեջ տեսնելով գործողության վիճակի արտահայտություն՝ Ա. Աբրահամյանը փորձում է դերբայները դասակարգել ըստ գործողության վիճակի արտահայտման յուրահատկությունների: Ըստ այդմ նա ժամանակակից հայերենի դերբայները բաժանում է երեք խմբի, «ա) տարտամ,անորոշ և հետևաբար թույլ դրսևորում ունեցող վիճակ արտահայտող դերբայներ՝ անորոշ, ժխտական, բ) ցայտուն, բայց ոչ ժամանակային վիճակ արտահայտող դերբայներ՝ անկատար, ենթակայական, գ) ժամանակային ընդհանուր վիճակ արտահայտող դերբայներ՝ ապառնի, վաղակատար, հարակատար»:

Այս խմբավորումից դուրս է մնում անորոշը, որի կերպային-վիճակային իմաստը բնորոշվում է որպես անորոշ իմաստ:

Կեպային դերբայներն արտահայտում են գործողության ընթացքը, կերպը

ըստ որում անկատարը արտահայտում է շարունակական, վաղակատարը՝ ավարտված, իսկ ապառնին՝ կատարելի կերպային իմաստ (հիշենք Մ. Աբեղյանի կերպերի տեսությունը):

«Այսպիսով, - գրում է Աղայանը, անկատար, վաղակատար և ապառնի դերբայները եռակի հակադրություն են կազմում՝կատարվող, կատարյալ, կատարելի կերպային իմաստներով և, օժանդակ բային միանալով, արտահայտում են այդ կերպերի և տվյալ ժամանակի հարաբերությունը»[1]: Ժխտման դերբայն «արտահայտում է հնարավորության աղոտ կերպային իմաստ, որ և օժանդակ բայի ժխտական ձևերի հարադրությամբ բացասվում է:

Այս դերբայները բնութագրվում են նաև իրենց գործառական առանձնահատկություններով:«Կերպային դերբայները ցույց են տալիս գործողության ընթացքը և հանդես են գալիս միայն ժամանակային ձևերի՝ օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերի հարադրությամբ, որով և գործառական տեսակետից բնորոշվում են

,որպես եղանակային բաղադրյալ ձևերի բաղադրիչ, նրանք բառային անկախ գործածություն չունեն և ինքնին չեն կարող լինել նախադասության անդամ։ Վերջապես, նրանցից նաև բառեր չեն կազմվում, ուստի և նրանք հիմույթային դեր չունեն» ։ Վիճակային դերբայները հակադրելով կերպային դերբայներին՝ Է. Աղայանը գրում է.«Վիճակային դերբայները ցույց են տալիս ոչ թե բուն իսկ գործողություն, այլ դրա հետ իբրև ենթակա կամ խնդիր առնչվող առարկայի վիճակը. այսպես՝ գնացող, կարդացող, վարող և նման դերբայներն արտահայտում են ոչ թե գնալ, կարդալ, վարել բայերով արտահայտված գործողությունների որևէ վիճակ, այլ որևէ առարկայի վիճակը, որևէ առարկա, որը կատարում է այդ գործողությունները» Այսպիսով, Է. Աղայանը ժամանակակից հայոց լեզվում ընդունում է 10 դերբայ (ձևի դերբայը վերապահությամբ), որոնք խմբավորվում են հետևյալ կարգերի մեջ.

1. Բացարձակ կամ ընդհանուր.— անորոշ.
2. Կերպային.— անկատար, վաղակատար, կատարելի, ժխտման.
3. Վինակային.— ա) որոշչական.— ենթակայական, հարակատար, ապառնի,
 բ) մակբայական. - ժամանակային, (ձևի)։

Այս բոլորը ցույց են տալիս, որ Է. Աղայանը նոր դիրքերից է մոտենում հայերենի դերբայների հարցին, նրանց գնահատման ու արժեքավորման հարցին՝ արտահայտելով մի շարք խորաթափանց մտքեր, Է. Աղայանի ուսումնասիրությունից ամենից առաջ պարզ է դառնում, որ հայերենի տարբեր դերբայները կամ դերբայների տարբեր խմբերը իմաստային ու կիրառական տարբեր առանձնահատկությունները են երևան հանում, հետևաբար և նրանք բոլորը չեն կարող քննվել նույն հարթության վրա՝ մի բան, որ սովորաբար անտեսվում կամ հաշվի չէր առնվում նախորդ շրջանի քերականական հետազոտությունների մեջ։

Սակայն, այս բոլորով հանդերձ՝ չի կարելի չնշել, որ Է. Աղաչանի դրույթների ու հարցադրումների մեջ կան վիճելի կետեր։ Ամենից առաջ այսպես կոչված կերպային ու վիճակային դերբայների հարցը, որ գրում, գրել, գրելու, գրի (անկատար, վաղակատար, ապառնի և ժխտման դերբայները ձևերը՝ մի կողմից և գրող, գրած, գրելիք, գրելիս (ենթակայական, հարակատար, ապառնի II , անկատար II) ձևերը՝ մյուս կողմից, իմաստով իրարից տարբեր են, դա անվիճելի է, և դրա մասին խոսք լինել չի կարող։Այդ ձևերի իմաստային տարբերությունը,այն է, որ առաջինները

գործողության կերպ, իսկ երկրորդները առարկայի վիճակ են արտահայտում։ Նշեմ նաև ,որ գործողության կերպերը (կատարվող, կատարված, կատարելի) ինքնին գոյություն չունեն, նրանք արտահայտում են առարկայի գործողությունը, ուրեմն և կապված են առարկայի հետ։ Իսկ սա էլ իր հերթին նշանակում է, որ այն դրույթը, թե այսպես կոչված կերպային դերբայներն արտահայտում են գործողության կերպ, իսկ վիճակային դերբայները առարկայի վիճակ, դժվար թե ընդունելի համարվի։ Մյուս կողմից՝ ասենք նաև այն, որ Է. Աղայանը վիճակային դերբայների մեջ տեսնում է նաև կերպի գաղփար։ (Ենթակայական և հարակատար դերբայները ցույց են տալիս առարկայի վիճակ՝ գործողության վճակի) շարունակական կերպով, առաջինը՝ ներկա երկրորդը՝ անցյալ ժամանակով)։ Սակայն կարծում ենք, որ այսպես կոչված «կերպային» և «վիճակային»դերբայների տարբեբությունն ամենևին էլ այն չէ, թե առաջինները գործողության կերպ, իսկ երկրորդները առարկայի վիճակ են արտահայտում, այլ այն, որ առաջինները գործողությունն արտահայտում են «մաքուր», «անկախ» ձևով, իսկ երկրորդները գործողության հետ միասին դրսևորում են նաև այլ և այլ խոսքի մասային իմաստներ։ Է. Աղայանը այսպես կոչված վճակային դերբայների մեջ տեսնում է ժամանակ, իսկ՝կերպային դերբայների մեջ՝ սոսկ գործողության ընթացք, կերպ, առանց ժամանակի գաղափարի։ Նա քննադատում է Ա. Աբրահամյանին այն բանի համար, որ վերջինս ժամանակային հատկանիշ է վերագրել ապառնին ու վաղակատարին (փախչելու, փախել), որոնք ըստ Աղայանի ժամանակի քերականական կարգից զուրկ են, ժամանակ չի վերագրել ենթակայականին, որը ժամանակ ունի։ Ըստ Է. Աղայանի տեսակետի, ասենք, կարդացող, կարդացած, կարդալիք ձևերը ժամանակ են արտահայտում(ներկա կամ զուգորդող, անցյալ կամ նախորդող և ապառնի կամ հաջորդող), իսկ կարդում, կարդացել, կարդալու ձևերը սոսկ կերպ (կատարվող, կատարված,կատարելի) են արտահայտում՝ զուրկ լինելով ժամանակից։ Բայց մեր կարծիքով, հայերենում ժամանակն ու կերպը չեն կարող այսպես կտրուկ կերպով սահմանազատվել ու հակադրվել։ Եթե ժամանակի գաղափարի արտահայտություն ենք տեսնում կարդացող, կարդացած և կարդալիք ձևերի մեջ,ապա այս նույն գաղափարը պետք է տեսնենք նաև կարդում, կարդացել և կարդալու ձևերի մեջ, որոնք արտահայտում են կատարվող, կատարված և կատարելի գործողություններ։ Եթե կարդում, կարդացել,

կարդալու ձևերը ընդհանրապես զուրկ են ժամանակի գաղափարից, ապա , նույն օժանդակ բայի հետ նրանք հանդես են գալիս որպես տարբեր ժամանակների արտահայտիչներ կամ կազմիչներ։

Հայ քերականագետնները հետևյալ տեսակետներն էին ներկայացրել անկախ դերբայների վերաբերյալ։

Գլուխ առաջին

Անկախ դերբայների կիրառությունը Ակսել Բակունցի արձակում,ուսումնասիրությունները կատարել ենք հետևյալ ժողովածուներում՝ «Մթնաձոր», «Սև ցելերի սերմնացանը »,«Անձրև » .

Այլ խմբագրումներ.«Միրհավ », «Խոնարհ աղջիկ»,«Ալպիական մանուշակ »,«Սպիտակ ձի» «Նամակ ռուսաց թագաորին»,«Բրուտի տղան»:

Անկախ դերբայներ

Անկախ դեբայները հանդես են գալիս ինքնուրույն շարահյուսական կիրառությամբ, ունեն բառային անկախություն: Ցույց են տալիս ոչ թե բուն գործողության ընթացքային վիճակը , այլ դրան որպես խնդիր կամ ենթակա առնչվող առարկայի՝ տվյալ գործոռությունը կատարելու , կատարված կամ կատարելի լինելու վիճակը:

Ժամաանկակից հայերենի անկախ դերբայներն են ՝անորոշ, ենթակայական,հարակատար, համակատար:

Անորոշ դերբայ

Անորոշ դերբայը ցույց է տալիս գործողության ընդհանուր անորոշ գաղափար: Անորոշ- ել կամ –ալ մասնիկները:

Անորոշ դերբաըը պատասխանում է ի՞նչ անել, ի՞նչ լինել հարցերին,հոլովվում է իրնքնին և ոչ փոխանվանական կիրառությամբ,որովհետև այն իր մեջ համատեղում է և բայի,և գոյականական անվան հատկանիշ: Հոլովվում է (ու) արտաքին հոլովմամբ (գրել – գրելու-գրելուց – գրելով):

Հայ քերականագիտության մեջ՝ Ա.Այտնյանը,Ս Պալասյանը, Մ. Աբեղյանը անորոշ դերբայը դասում են գոյական անվան շարքը ելնելով նրա գոյականական գործածությունից: Բագրատունին այս դերբայը առանձնացրել է դերբայական մյուս ձևերից և ներկայացրել որպես եղանակ: Նա այն դասեց մյուս դերբայների շարքին դրանից հետո առանձին քերականներ Ս.Պալասյանը ընդունում էին անորոշ եղանակը: Անորոշ դերբայը չի կարող բայի եղանակաձև համրվել: Եղանակի քերականական կարգը արտահայտում է խոսողի վերաբերմունքը գործողության

կատարման նկատմամբ,իսկ անորոշ դերբայն այն չի արտահայտում ուստի և եղանակային ձև չէ. քերականները անորոշ դերբայի համար գրաբարում սահմանել են ժամանակներ՝ որպես համապատասխան զուգահեռներ:

Անորոշ դերբայի մեջ չկա նաև ժամանակի քերականական կարգ:

Անորոշ դերբայի իմաստային-քերականական հատկանիշները:

Անորոշ դերբայի ըմբռնումը երկու գրականներում նույնն է: Այն իր մեջ համատեղում է բայի ու գոյական անվան հատկանիշները և յուրահատուկ տեղ ունի հայերենի դերբայների մեջ,այն կոչվում է բայանուն, իսկ մյուս դերբայները՝ բայածականներ: Ձևաբանական և շարահյուսական առումներով բայը հայերենում առավել բարդ քերականական կառուցվածք ունի:

Արևելահայերենում և արևմտահայերենում համապատասխանաբար բայական բառույթի շրջանակներում միավորվում են ոչ միայն ստորոգումային ձևերը՝ձևաբայերը: Այդ շրջանակներում դիտարկվում են նաև ոչ ստորոգումային ձևերը՝անկախ դերբայները: Զուգադրելիս պարզ է դառնում, որ երկու գրականներում էլ բայը դրսևորում է նաև մի շարք տարբերություններ, որոնք արտահայտվում են հիմնականում կառուցվածքային-ձևակազմական համակարգում, մասամբ նաև շարահյուսական կիրառություններում: Երկու գրականներում անորոշ դերբայը բառակապակցությունից դուրս անվանում է գործողությունն առանց խոնարհման, ժամանակի, դեմքի ու թվի քերականական կարգերի: Այն ունի բայասեռ, նաև հոլովվում է՝ հանդես գալով գոյականական բոլոր պաշտոններով: Անորոշի ձևն ինքնին ժամանակի նշանակություն չի արտահայտում, սակայն դառնում է բայական անդեմ նախադասություն: Ու թեև այս դերբայը չունի կերպի քերականական կարգ, սակայն անորոշին խորթ չեն կերպաժամանակային որոշ նշանակություններ, որոնք դրսևորվում են, օրինակ, բայական անդեմ նախադասություններում՝ Լռե՛լ: Բայական շարահյուսական բոլոր կարգերից առավել արտահայտված է կառավարումը:

Անորոշ դերբայը չի մասնակցում եղանակային ձևերի կազմությանը, խոսքի մեջ ունենում է ինքնուրույն կիրառություն, հանդես գալիս տարբեր պաշտոներով:

1. Ենթակա.

Դարպասի մոտ իրիկնապահին **նստելը** պապի հին սովորությունն էր ։(Բրուտի Տղան, էջ 469)

Այդպես շատ **ուրախանալը** դեռ վաղ է ,սիրելի՛ հայր։(Բրուտի Տղան, էջ 469)

2. Ստորոգելի .

Նա ուզում էր գնալ Սոնաի մոտ, ուզում էր **ասել** նրան, որ այդ միտքը սպանում է իրան։ (Միրհավ ,էջ72)

3. Հատկացուցիչ

Հետևից ճյուղի **կոտրվելու** ձայն լսվեց։ **(**Մթնաձոր,էջ 11)

4. Որոշիչ.

Ծիրանի տափը հիշատակելու արժանի ոչինչ չէր ունենա, եթե նա երկու գյուղի՝Միրի և Մրոցի միջև անվերջ **շարունակվող կ**ռիվների, խոսք ու զրույցի առարկա չդառնար, եթե նրա համար տարիների ընթացքում բազմաթիվ անգամ մահակներով կռիվ չտային երկու հարևան գյուղերը՝ Մրոցն ու Միրը։(Ծիրանի տափ,էջ193)

5. Ուղիղ խնդիր.

Նա ուզում էր աշխարհ **տեսնել**, ինչպես ասում էր նրա ընկերը, որ բաքվում էր աշխատել և հիվանդ լինելու համար տուն եկել։(Վադունց Բադին,18էջ)

Սառույցին, որ հասավ կանգնեց ոտքի,փոձեց վեր **բարձրանալ։(**Մթնաձոր,էջ 11)

6. Հանգման անուղղակի խնդիր.

Նախասենյակում սպասում էր դռների **բացվելուն։(**Ալպիական մանուշակ ,էջ439)

7. Անջատման անուղղակի խնդիր

Աղջիկն հրաժարվեց ուսուցչի հետ **հանդիպելուց։(**Խոնարհ աղջիկ ,էջ 414)

8. Պատճառի պարագա.

Հասկանալով նրա խորամանկությունը՝այդ օրվանից այլևս չհանդիպեց նրան։

9. Ձևի պարագա.

Ավին ետ վազեց ձյունի մեջ **ընկնելով**, վեր **բարձրանալով։** (Մթնաձոր ,էջ 11)

Հեռվից **խաղալով** ու **խայտալով** վազում էր սպիտակ ձին։ (Սպիտակ ձի ,532էջ)

Այդպես էլ արին Սանդուխտին լացով ու **խաբելով** տարան, մայրը մինչև լույս մնաց նրա մոտ խոստացավ ամեն օր գալ, ծեծով սպառնաց, մայրն էլ լաց եղավ։(Աքարում էջ39)

10. Նպատակի պարագա.

Գալիս էին՝ իրենց հարգանքը **մատուցելու** հանգուցյալին։«Աքարում,էջ 39»
Վարազները իջնում են ջուր **խմելու։**

Ենթակայակա դերբայ

Ենթակայակա դերբայը ցույց է տալիս առարակաի՝ որևէ գործողության եղելիության դրության կամ վիճակի ունակ լինելու գաղափար՝ որպես առարկայի հատկանիշ կամ հատկանիշ կրող։

Ենթակայական դերբայը կազմվում է -ող մասնիկով, որը դրվում է(ե)խոնարհման բայերի ներկայի և(ա)խոնարհման բայերի կատարյալ հիմքի վրա՝ ա) գրել - գրող, թռչել -թռչող բ) կարդալ-կարդացող, հեռանալ-հեռացող։

Առարկայի վիճակային հատկանիշ ցույց է տալիս նաև -ինչ,-իկ, -ուն,-ու ածանց ունեցող ածականները,սակայն այդ հատկանիշը կայուն է ենթակայական դերբայի համեմատությամբ. վերջինիս ցույց է տալիս ընթացքի մեջ եղող հատկանիշ՝ նկարիչ–նկարող, հասուն-հասնող,ազդ-ազդող։

Հայ քերականության մեջ ենթակայական դերբայը երկար ժամանակ «ընդունելության ներկա» անունն է կրել։ Սակայն այս դերբայը իրականում ներկա դերբայ կամ դերբայի ներկա ժամանակ չէ և առհասարակ իր մեջ չունի ժամանակի քերականական կարգը։ Մ.Աբեղյանը այս դերբայը ընդունեց որպես առանձին , ինքնուրույն դերբայ և կոչեց «ենթակայական» անունով՝ խնդրիրն մոտենալով շարահյուսական տեսանկյունից ։ Նրանից առաջ Ա. Բագրատունին դերբայների շարքից հանել է այս դերբայը և համարել բայածական։ Մ.Աբեղյանը թեև ընդունում էր այս դերբայի բայական հասկացություն լինելը, սակայն չէր հրաժարվում Բագրատունու տեսությունից։

Ենթակայական դերբայը ցույց է տալիս գործողի անուն, որին հատուկ է բայասեռի քերականական կարգը,կարող է ուղիղ խնդիր լրացում ունենալ (խոսքը վերաբերում է ներգործական սեռի բայերին), իսկ ձևաբանորեն տարբերվում է նրանով, որ կարող է ստանալ -վ- ածանց և վերածվել կրավորականի, նրա դերը հիմնականում շարահյուսական է։

Պ. Պողոսյանը **ենթակայական դերբայ** + **եմ** կառույցը համարում է եղանակային ձև և առաջարկում է դրանք մտցնել բայի դիմավոր ձևերի հարացույցի մեջ՝ իբրև սահմանական եղանակի«պոտենցիալ և անցյալ պոտենցիալ ժամանակներ»[2]:

Ենթակայական դերբայը խոսքի մեջ կատարում է որոշչի, ստորոգելիի և գոյականին հատուկ պաշտոնները.

1. Որոշիչ

Մթնաձոր **տանող** միյակ արահետը առաջին ձյունի հետ փակվում է, մինչև գարուն ոչ մի մադ ոտք չի դնում անտառներում:(Մթնաձոր, էջ 11)

Նկարչի հայացքը մի պահ սևեռած մնաց **մխացող** օջախին : (Ալպիական Մանուշակ, 439 էջ)

Թաց գետինը խլացնում է **վազող** ձիերի դոփյունը:

2. Ստորոգելի

Դումանը **շոյող** է, ինչպես զեփյուռ ,ձիերի դրոփյունը, ինչպես երգ:(Սպիտակ ձի,էջ53)

Ենթակայակն դերբայի գոյականացում

Ենթակայական դերբայը համատեղվում է բայի և գոյականական անվան իմաստներն ու հատկանիշները,ինչն էլ նպաստում է,որ այս դերբայը փոխանցվի գոյականին: Ենթակայական դերբայի գոյականացումը տեղի է ունենում շարահյուսական կիրառության հիմքի վրա: Որոշ շարահյուսական կապակցություններում հաճախակի գործածվելով այն իմաստային զարգացում է ապրում, խամրում է նրա արտահայտած գործողության ընթացքի գաղափարը և միևնույն ժամանակ նրա ընդհանուր առարկայական նշանակությունը վերածվում է թանձրացականի: Նույն ձևը չի դադարում դերբայ լինելուց ,և լեզվում առաջանում են համանուններ: Վերածելով գոյականի ՝ող ձևերը զրկվում են սեռի, բայական խնդրառության հականիշներից՝ ձեռք բերելով գոյականին հատուկ հատկանիշներ:

Գրող՝ գրել բայի ենթակայակն դերբայը, գրող ստեղծագործող:

Ընտրող՝ ընտրել բայի ենթակայակն դերբայը ,ընտրող ՝քվեարկող:

Նույն կերպ՝ ուսանող, ծնող, աշխատող , ծառայող, շահագործող, արդյունաբերող:

Ենթակայական դերբայի մեջ կա նաև առարկայի գաղափար՝ Խոսողը լռեց։ Պարողը ժպտում է։

Օրինակ.

Հեռացողն հեռանում է, ով մնում է տանը նայում է նրա ետևից մինչև սարի հետևն անցնի կամ իջնի ձորը։

Մինչև շաբաթվա վերջ թոշակը **չբերողը** կհեռացվի դատարանից ։«Սպիտակ ձի, էջ 532»

Տեսնողն էլ կասի ինչ աղջիկ է սա։«Խոնարհ աղջիկը ,էջ 414»

Գլուխ երկրորդ

Երկարժեք դերբայներ

Համակատար և Հարակատար դերբայները բացի անկախ կիառությունից ունեն նաև ձևաբանական աժեք,որի համար էլ կոչվում են երկարժեք։

Հարակատար դերբայ

Պայմանավորված հարակատար դերբայի երկբնույթ իմաստով (իր մեջ համատեղում է և՛ հատկանշային, և՛ ստորոգումային իմաստներ)՝ արևելահայերենում և արևմտահայերենում զգալիորեն տարբեր են դրա իրացումները, և երկար ժամանակ հայ քերականագիտության մեջ այս դերբայը չեն ընդունել ,որպես ինքնուրույն դերբայ, համարել են «անցեալ դերբայի» մի տարբերակ։ Մ. Աբեղյանը մի քայլ առաջ է անցնում. «անցյալ դերբայի»-ած ձևի համար ստեղծում է առանձին տերմին՝ հարակատար՝ դարձյալ դիտելով որպես «անցեալ դերբայի» մի տարբերակ[3]։ Այս դերբայի արտահայտած իմաստներին շատ են անդրադարձել լեզվաբանները[4]։ Է. Աղայանը գրում է, որ հարակատար դերբայն արտահայտում է գործողություն և վիճակ (դրություն), և այս երկու նշանակությունները միասնաբար են հանդես գալիս։

Այս դերբայը կարող է կիրառվել գոյականաբար (հոլովվում է փոխանվանաբար և՛ եզակի, և՛ հոգնակի թվով՝ ենթարկվելով -ի հոլովման), և այդ դեպքում այն ունենում է ոչ միայն հատկանշային, այլև առարկայական նշանակություն։ Հարակատար դերբայը ցույց է տալիս ավարտված գործողության՝ իբրև այն կատարող առարկայի վիճակային հատկանիշ։ Հարակատար դերբայը կազմված է –ած մասնիկով, որը դրվում է (ե) խոնարհման պարզ բայերին և կրավորական ու բազմապատկական ածանց ունեցող բայերի ներկայի հիմքի վրա (պառկել-պառկած, թեքվել –թեքված) ,ինչպես նաև (ա) խոնարհման բայերի և (ն,չ,ցն)ածանցներն ունեցող բայերի կատարյալ հիմքի վրա (կարդալ-կարդացած, հեռանալ-հեռացած, թռչել-թռած,գտնել-գտած)։

Գործողության գաղափարը ներկայացվում է հարակատար դերբայում հետևանքայնությամբ։ Բայիմաստից դուրս, հարակաատար դերբայն արտահահայտում է նաև հատկանշային իմաստ։

Ինքնուրույն գործածությամբ հարակատար դերբայը նախադասության մեջ հանդես է գալիս տարբեր պաշտոններով։

1. Ստորոգելի

Այսպես էր Պանին ։Նրա սարսափը հեռուներում էր **տարածված** ։Նրա մասին բերնե-բերան պատմություններ էին ասում։ «Մթնաձոր, էջ 11»

Քարամենց եզան դունչը ինչու է **կոտրած**։ «Վադունց Բադին,էջ 18»

Եվ **կանգնած** է վայրի ժայռի կատարին։

2. Որոշիչ

Մի անգամ ետ նայեց Ավին **անցած** ճանապարհին։« Մթնաձոր, էջ 11 »

Նոր **փորած** հողը ծծել էր արյունը կարմիր։ «Այու սարի լանջին,էջ 46»

Մաշված դուռը դողդոջ երգում էր մի հին երգ։

3. Ձևի պարագա

Երբ տասնապետը եկավ խրամատին նայելու տեսավ Պետոն՝ **ընկած** երեսնիվայր։ «Այու սարի լանջին,էջ 46»

Զարհուրանքով կարելի է նայել նրան,երբ փողոցի անցուդարձ անողներից պահված։ Մի անկյունում **քաշված** սրա-նրա համար տրեխ էր գոծում։ «Մթնաձոր,էջ 11»

Հարակատար դերբայ + օժանդակ բայի կառույցը

Վիճակ, դրություն ցույց տվող որոշ հարակատար դերբայներ օժանդակ բայի հետ կազմում են դիմավոր բայեր (նախկինում այս ձևը եղել է սահմանական եղանակի կազմում և կոչել են հարակատար անցյալ). նստած եմ, քնած էի, կանգնած ենք և այլն։ Ժամանակակից արևելահայ գրական լեզվում հարակատար ժամանակաձևով գործածվում .են ա)կրավորական բայերը ջարդված է, կատարված է. բ) չեզոք այն բայերը ,որոնք դրություն վիճակ են ցույց տալիս կանգնած է, նստած է։ Ներգործական բայերը ընդհանրապես հարակատար ժամանակաձև չեն ստանում։ Սրանց փոխարեն հաճախ գործածվում է վաղակտար ձևաբայը։

Հարակատար դերբայի գոյականացումը

Հրակատար դերբայն իր մեջ համատեղում է բայի և գոյական անվան իմաստներն և հատկանիշները, ինչն էլ նպաստում է, որ այս դերբայը փոխանցվի

գոյականին։Հարակատար դերբայի գոյականացումը տեղի է ունենում շարահյուսական հիմքի կիրառության վրա։ Որոշ շարահյուսական կապակցություններում հաճախակի գործածվելով՝ այն իմաստային զարգացում է ապրում ,խամրում է նրա արտահայտած իմաստի գաղափարը և միևնույն ժամանակ նրա ընդհանուր առարկայական նշանակությունը վերածվում է թանձրցականի։ Նույն ձև չի դադարում դերբայ լինելուց և լեզվում առաջանում են համանուններ։Վերածվելով գոյականի՝ ած ձևերը զրկվում են սեռի բայական խնդրառության հատկանիշներից՝ձեռք բերելով գոյականին հատուկ հատկանիշներ։
Մի շարք հարակատար դերբայներ ,շարահյուսական կիրառության հիմքով պայմանանվորված , վերածվել են կամ ածականի(կարդացած մարդ , խմացծ մարդ) կամ գոյականի (նշանած, սիրած, խորոված, հավելված, կոտորած, հատված և այլն)։
Օրինակ.
Ես կգամ ,որպես **մոռացված** մի երգ՝հյուսված աղոթքից,սիրուց ու ծաղկից։
Մինասի տղա Ներսեսի **պատմածը** ճշմարտություն է։

Համակատար դերբայ

Համակատար դերբայը ցույց է տալիս շարունակվող գործողության վիճակ, որին զուգընթաց կատարվում է մեկա այլ գործողություն։
Համակատար դերբայը կազմվում է դերբայական հիմքով՝ անորոշ դերբային ավելացնելով – իս մասնիկը (գրելիս, թռչելիս, գտնելիս, մոտենալիս, փոխանցելիս)։ Անդրադառնալով -իս վերջավորությամբ ձևին՝ Մ. Աբեղյանն այն անվանում է մակբայ՝ «դերբայական մակբայ կամ բայական մակբայ»։ Այն համարել են անկատար դերբայի մի տարատեսակ և ոչ թե առանձին դերբայ՝ «համակատար», «համընթացական», «զուգընթացական», «հարակցական» անվանումներով կամ՝ժամանակային դերբայ։
Պետք է նշել, որ այս անվանումը կարող է ընկալվել որպես իմաստային հատկանիշ, մինչդեռ դերբայը ժամանակ չի արտահայտում։ Իհարկե, -ում և -իս ձևերը չեն կարող դիտվել սոսկ որպես նույն քերականական կարգի տարբերակներ, սակայն սխալ կլիներ անտեսել այս ձևերի իմաստային և կիրառական ընդհանրությունները։ Սա

հաշվի առնելով՝ Մ. Ասատրյանը առաջարկում է -ում-ով ձևը կոչել անկատար առաջին կամ ուղղակի անկատար, իսկ -իս-ով ձևը՝ անկատար երկրորդ։

Երկար ժամանակ մեր քերականության մեջ այս դերբայը համարվել է անկատարի երկրորդ ձև։ Է.Աղայանը այն դիտում է ինքնուրույն դերբայ։ Նա այդ դերբայն համարում է ժամանակային, որը ընդունելի չէ, քանի որ անկախ դերբայը ժամանակի իմաստ չի արտահայտում։ Աղայանը այդ հիմնավորումը տալիս է շարահյուսական հիմնավորումով՝ նկատի ունենալով ,որ այս դերբայը հանդես է գալիս ժամանակի պարագայի պաշտոնով։ Սակայն ձևաբանական միավորը շարահյուսական արժեքով կոչել ճիշտ չէ։ Այս դերբայը, իրոք, իր իմաստային հատկանիշներով և քերականկան արժեքով տարբերվում է անկատարից։ Այն անկախ դերբայ է, այսինքն ինքնուրույն շարահյաուսական արժեք ունեցող բայաձ է, չի մասնակցում բայի դիմավոր ձևերի կազմությանը ի տարբերություն անկախ դերբայի, որը միայն դիմավոր ձևերի կազմությանն է մասնակցում։

Նախադասության մեջ կատարում է.

1.Ժամանակի պարագայի պաշտոն.

Ամեն անգամ Իսանանց խանութ **մտնելիս**՝ միջակ ախպեր մի տեսակ ծաղրում ասում էր .Հաբուդին։« Վադունց Բադին,էջ18»

Ձիավորը **ճանապարհելիս** նա փափախը հանեց։

2.Ձևի պարագա.

Երբ մոտեցավ և նա, որ կեսգիշերին կտուրի վրա **խոսելիս** ասել էր, թե «լավ չի լինի թե եդպես գնա»և ուզեց աջը մեկնի և բացելիս ձիավորի դռան մեջ դնի այն, ինչ պինդ սեղմել էր ձեռքում, աջը մեկնելիս աչքը ընկավ ձիավորի աչքին և կիսով չափ ընկած ձեռքը երկյուղից ետ ընկավ փափախի վրա ,բառի մեջ դրսում։ «Ծիրանի Տափ,63 էջ»

Համակատարը որպես՝երկրորդական բաղադրյալ ժամանակաձևի կազմիչ

Գալ, լալ, տալ, անկանոն բայերի անկատարի ձևերը բացակայում են, և սահմանական եղանակի ներկա և անցյալի անկակատար բայաձևերը կազմվում են համակատար դերբայով ու օժանդակ բայերով գալիս եմ լալիս էի տալիս են և այլն։ Եվ հարակատար և համակատար դերբայները մասնակցում են երկրորդական

բաղադրյալ ձևերի կազմությանը կլինի, քնած է լինելու, լսած պետք էլինի, աշխատելիս է եղել, նկատելիս կլինի,կարդալիս պիտի լինի և այլն:

Օրինակ՝

Եվ երբ Մթնաձորի անուն են տալիս , երևում է ,որ ատամներն ավելի են դուրս ցցվում: Ոսկորների բաց ճեղքից երևում են ատամները ,բաց է քթի խոռոչը, և երբ Ավին համրի պես խոսում է, շունչը քթի խոռոչներով է դուրս **գալիս:«**Մթնաձոր, էջ 11»

Եզրակացություններ

Ակսել Բակունցի ստեղծագործությունները ուսումնասիրելով `հանգեցինք հետևյալ եզրակացություններին որ.

- Հարակտար դերբայը նախադասության մեջ զբաղեցնում է հետևյալ պաշտոնները՝ որոշիչ, ձևի պարագա,ստորոգելի։

  Ակսել Բակունցը իր ստեղծագործություններում կիրառել է ավելի շատ հարակտար դերբայը գործիական հոլովով, որն էլ հաճախ կազմում է դերբայական դարձված ` նախադասության մեջ զբաղեցնելով ձևի պարագայի պաշտոնը։

- Անորոշ դերբայի, որը նաղադասության մեջ դառնում է՝ որոշիչ, ենթակա, հատկացուցիչ, հնագման անուղակի խնդիր, անջատման անուղակի խնդիր, պատճառի պարագա, ժամանակի պարագա, հիմունքի պարագա։ Ա. Բակունցի ստեղծագործություններում ավելի շատ դրսևորվում է ձևի պարագայի և նպատակի պարագայի պաշտոններով։

- Ենթակայական դերբայը, որը նախադսության մեջ դառնում է որոշիչ, սորոգելի։ Ա.Բակունցի ստեղծագործություններում հանդես է գալիս հիմնականում որոշչի պաշտոնով ։

- Համակատար դերբայի, որը նախադասության մեջ կիրառվում է՝ ժամանակի պարագայի և ձևի պարագայի պաշտոններում։ Ա.Բակունցի արձակում շատ քիչ է կիրառվում համակատար դերբայը, իսկ կիրառության դեպքում հիմնականում հանդես է գալիս ժամանակի պարագայի պաշտոնով։

- Համակատար դերբայը Ա.Բակունցի արձակում ավելի շատ հանդես է գալիս որպես երկրորդական ժամանակաձևերի կազմիչ։

Օգտագործված Գրականությունների ցանկ

1. Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953.

2. Աբեղյան Մ., Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906.

3. Աբրահամյան Ս., ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասեր,Ե.,1960.

4. Աղայան Էդ.,Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը,Եր., 1967.

5. Ասատրյան Մ .Ե.,ժամանակակից հայոց լեզու,Ե.,1973.

6. Իշխանյան Ռ.,Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը,Եր., 1974.

7. Խալաթյան Ֆ.,Ջուլֆայան Ռ. Հայրենագիտական դպրոցական ընդարձակ բառարան –տեղեկատու ,Ե.,2014.

8. Խալաթյան Ֆ. ժամանակակից հայոց լեու Բ մաս,Ե., 2010.

9. Միրումյան Մ.,Հայոց լզու ,Ե., 2012.

10. Ջահուկյան Գ. ժամանակակից հայոց լեզվի դասընթաց,Ե.,1955.

11. Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց,Ե.,1955.

1. Բակունց Ա. հատոր 1, Երևան ,1976.

2. Բակունց Ա .«Սև ցելերի սերմնացանը », ժողովածու,հատոր 1 Երևան ,1976 ,էջ191 .

3. Բակունց Ա .«Անձրև » ժողովածու, հատոր 1, Երևան ,1976, էջ 339.

4. Բակունց Ա .« Մթնաձոր » ժողովածու, հատոր 1 ,Երևան ,1976, էջ 9.